ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ՄԱՐՄԻՆ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար

Գ. Շախկյան

«_02_» _սեպտեմբերի__2025թ.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ

PR-03

ՄՇԱԿԵԼ Է

Կառավարման համակարգի մենեջեր

_Նազիկ Աբգարյան_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Գործարկման թվականը՝ _02.09.2025թ._

Երևան 2025

Բովանդակություն

1. Կիրառման ոլորտը 3
2. Նորմատիվ վկայակոչումները 3
3. Տերմինները և սահմանումները 4
4. Ընդհանուր դրույթները 4
5. Հավատարմագրման ոլորտի արդիականացման կարգը 5
Հավելված Ա - Եզրակացություն հավատարմագրման ոլորտի արդիականացման և (կամ) համապատասխան ռեեստրում ներառելու վերաբերյալ 7
Հավելված Բ - Որոշում հավատարմագրված ՀԳՄ-ների հավատարմագրման ոլորտի արդիականացման և (կամ) համապատասխան ռեեստրում ներառելու վերաբերյալ 9
Հավելված Գ - Հավատարմագրման ոլորտի արդիականացման գրանցամատյանի ձևը 10

1. Կիրառման ոլորտը

1.1 Սույն ընթացակարգը սահմանում է հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների (այսուհետև՝ ՀԳՄ) հավատարմագրման ոլորտի և կից փաստաթղթերի արդիականացման կարգը:

1.2 Սույն ընթացակարգը կիրառելի է հավատարմագրման փորձագետների (գնահատողների) և հավատարամգրված ՀԳՄ-ների համար:

2. Նորմատիվ վկայակոչումները

Սույն փաստաթղթում վկայակոչված են հետևյալ փաստաթղթերը՝

«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքը

«Հավատարմագրման չափանիշները, համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման, գնահատումների կարգը և ժամկետները» ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի ապրիլի 2-ի N 915-Ն հրամանի հավելված

«Հայաստանի Հանրապետության հավատարմագրման ազգային մարմնի պատկերանիշը, հավատարմագրման նշանը և դրանց կիրառման կարգը» ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հուլիսի 8-ի N 1745-Ն հրամանի հավելված

«Հավատարմագրման վկայագրի (հայերեն, ռուսերեն, անգլերեն) և դրան կից հավատարմագրման ոլորտների հավելվածների ձևերը» ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հունիսի 21-ի N 1612-Ն հրամանի N 1 հավելված

ՀՀ կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի N 152-Ն որոշման հավելված «Հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոններին)) ներառումը ԵԱՏՄ-ի համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրում, ինչպես նաև դրա ձևավորումը և վարումը» (ԵԱՏՀ Խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի N 100 որոշում)

ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի N 1795-Ն որոշում «Ազգային և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգման ոլորտի

շրջանակներում հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների և դրանց կողմից տրամադրված, գրանցված համապատասխանության գնահատման փաստաթղթերի ռեեստրների վարման կարգերը և չափանիշները սահմանելու մասին»

K-07 Համապատասխանության գնահատման մարմիններին Եվրասիական տնտեսական միության միասնական ռեեստրի ազգային մասում ներառման կարգը

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000-2012 Համապատասխանության գնահատում. Բառարան և ընդհանուր սկզբունքներ

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 Համապատասխանության գնահատում. Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում իրականացնող հավատարմագրման մարմիններին ներկայացվող ընդհանուր պահանջներ

3. Տերմինները և սահմանումները

Սույն ընթացակարգում կիրառված են «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքով, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտներով սահմանված տերմիններն ու սահմանումները:

4. Ընդհանուր դրույթները

4.1 Հավատարմագրման ոլորտի արդիականացումն իրականացվում է՝

1) հավատարմագրման ոլորտում խորհրդանիշի (լոգո) փոփոխության,

2) վկայակոչված իրավական և (կամ) ստանդարտացման փաստաթղթի, փորձարկման մեթոդի անվանման կամ խմբագրության փոփոխության և (կամ) լրացումների դեպքում, և (կամ) նոր իրավական, ստանդարտացման փաստաթղթի գործողության մեջ մտնելու (եթե նշված փաստաթղթի ներառումը չի ենթադրում հավատարմագրման ոլորտի ընդլայնման գործընթաց),

3) հավատարմագրման ոլորտի և կից փաստաթղթերի ձևաչափի փոփոխության և/կամ ուղղումների դեպքերում,

4) հավատարմագրված ՀԳՄ-ների համապատասխան ռեեստրում ներառելու նպատակով:

4.2 Հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներին, արտադրանքի սերտիֆիկացման մարմիններին և հսկողություն իրականացնող մարմիններին Եվրասիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրի ազգային մասում ներառելու համար պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի N 152-Ն որոշմամբ (ԵԱՏՀ Խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի N 100 որոշում), ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի N 1795-Ն որոշմամբ և K-07 կարգով սահմանված պահանջներին:

5. Հավատարմագրման ոլորտի արդիականացման կարգը

5.1 ՀԳՄ-ն հավատարմագրման ոլորտի արդիականացման համար, ուղեկցող գրությամբ էլեկտրոնային փոստով «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ ԱՐՄՆԱԲ) է ներկայացնում արդիականացման ենթակա հավատարմագրման ոլորտը և անհրաժեշտ կից փաստաթղթերը (օրինակ՝ Կիրառվող ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի ցանկը և այլն):

5.2 ԱՐՄՆԱԲ-ը գրությունը գրանցում է Հավատարմագրման ոլորտի արդիականցման գրանցամատյանում (համաձայն Գ հավելվածի) և տնօրենի տեղակալի կողմից մակագրման թերթիկի միջոցով փոխանցվում է նշված ՀԳՄ-ի հավատարմագրման գործընթացն իրականացրած գնահատման խմբի ղեկավարին՝ արդիականացման գործընթացն սկսելու նպատակով:

5.3 Գնահատման խմբի ղեկավարը 20 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է հավատարմագրման ոլորտի փորձաքննություն/լրացուցիչ փորձաքննություն և կազմում է եզրակացություն (համաձայն Ա հավելվածի) հետևյալ տարբերակներով՝

- փորձաքննության դրական արդյունքների դեպքում լրացվում է Տարբերակ 1-ի 3-րդ կետը, իսկ լրացուցիչ փորձաքննության դրական արդյունքների դեպքում՝ Տարբերակ 2-ի 2-րդ կետը,

- փորձաքննության բացասական արդյունքների դեպքում լրացվում է Տարբերակ 1-ի 1-ին և(կամ) 2-րդ կետերը, իսկ լրացուցիչ փորձաքննության բացասական արդյունքների դեպքում՝ Տարբերակ 2-ի 1-ին կետը:

Հավատարմագրման ոլորտի փորձաքննության ժամկետը կարող է երկարաձգվել՝ կապված սույն ընթացակարգի 4.1 կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված ռեեստրներ ներառելու ընդհանուր գործընթացների գործարկման ծրագրային փոփոխությունների հետ:

5.4 Հավատարմագրման ոլորտի արդիականացման մերժման դեպքում ԱՐՄՆԱԲ-ը 3 աշխատանքային օրվա ընթացքում ՀԳՄ-ին գրավոր տեղեկացնում է՝ նշելով մերժման հիմքերը և, անհրաժեշտության դեպքում, առաջարկում է ՀԳՄ-ին ներկայացնել հավատարմագրման ընդլայնման հայտ:

5.5 Եզրակացության հիման վրա, 3 աշխատանքային օրվա ընթացքում, ընդունվում է արդիականացման վերաբերյալ որոշումը (համաձայն Բ հավելվածի), որից հետո ԱՐՄՆԱԲ-ի տնօրենը հաստատում է արդիականացված հավատարմագրման ոլորտը: Հավատարմագրման ոլորտի «Վկայագրի տրման ամսաթիվը» տողում նշվում է արդիականացման ամսաթիվը: Արդիականացման ժամանակ հավատարմագրման վկայագիրը ենթակա չէ վերաձևակերպման, բացառությամբ այն դեպքի, երբ փոփոխվում է հավատարմագրման ոլորտի հավելվածի համարը: Հաստատված արդիականացված հավատարմագրման ոլորտը (անհրաժեշտության դեպքում նաև հավատարմագրման վկայագիրը) տրամադրվում է ՀԳՄ-ին:

5.6 Արդիականացված հավատարմագրման ոլորտը հաստատվելուց հետո, ԱՐՄՆԱԲ-ի ռեեստրների վարման բաժինը 2 աշխատանքային օրվա ընթացքում ՀԳՄ-ին ներառում է համապատասխան ռեեստրում:

Հավելված Ա

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հավատարմագրման ոլորտի արդիականացման և (կամ) համապատասխան ռեեստրում ներառելու վերաբերյալ

«___»_____20__թ.

Ուսումնասիրելով _____
(ՀԳՄ-ի անվանումը)

_____

հավատարմագրման ոլորտը, որը «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ է ներկայացվել №_____, առ «___»_____20__ թ. գրությամբ, հայտնում ենք, որ

Տարբերակ 1 (փաստաթղթերի փորձաքննության փուլ)

1) ☐ առկա են հետևյալ դիտողությունները և (կամ) առաջարկությունները՝

_____,

_____:

2) ☐ հավատարմագրման ոլորտը ենթակա չէ արդիականացման, ուստի առաջարկում ենք ներկայացնել հավատարմագրման ընդլայնման հայտ.

_____,

_____:

3) ☐ ելնելով ներկայացված հավատարմագրման ոլորտի փորձաքննության արդյունքներից և դիտողությունների բացակայությունից՝ հավատարմագրման ոլորտը ենթակա է արդիականացման,

4) ☐ նշված ՀԳՄ-ն համապատասխանում է ՀՀ, ԵԱՏՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին և կարող է ներառվել համապատասխան ռեեստրում:

Տարբերակ 2 (փաստաթղթերի լրացուցիչ փորձաքննության փուլ)

1) ☐ առկա են հետևյալ դիտողությունները՝

_____,

_____:

2) ☐ ելնելով ներկայացված հավատարմագրման ոլորտի փորձաքննության արդյունքներից և դիտողությունների բացակայությունից՝ հավատարմագրման ոլորտը ենթակա է արդիականացման:

3) ☐ նշված ՀԳՄ-ն համապատասխանում է ՀՀ, ԵԱՏՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին և կարող է ներառվել համապատասխան ռեեստրում:

_____ _____

(փորձաքննությունն իրականացնողի ստորագրությունը, անվանատառը, ազգանունը)

Հավելված Բ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հավատարմագրված ՀԳՄ-ների հավատարմագրման ոլորտի արդիականացման և (կամ) համապատասխան ռեեստրում ներառելու վերաբերյալ

Որոշման ամսաթիվը _____ Որոշման համարը_____

Հիմք ընդունելով «____»_____20 թ.-ի հավատարմագրման ոլորտի արդիականացման վերաբերյալ եզրակացությունը՝ ԱՐՄՆԱԲ-ը ***ՈՐՈՇԵՑ՝***

_____

(ՀԳՄ-ի անվանումը)

☐ արդիականցնել հավատարմագրման ոլորտը,

☐ ներառել համապատասխան ռեեստրում:

«Հավատարմագրման ազգային մարմին»
ՊՈԱԿ-ի տնօրեն՝ _____ _____
(ստորագրությունը) (անվանատառը, ազգանունը)

Տնօրենի տեղակալ՝ _____ _____
ստորագրությունը (անվանատառը, ազգանունը)

Ռեեստրների վարման բաժնի պետ՝ _____ _____
(ստորագրությունը) (անվանատառը, ազգանունը)

Հավելված Գ
Հավատարմագրման ոլորտի արդիականացման գրանցամատյանի ձևը

Հ/Հ	Կազմակեր-պության անվանումը և ՀԳՄ-ի տեսակը	Գրության համարը, ամսաթիվը	Փորձաքննություն իրականացնողի անվ., ազգանունը, տրման ամսա-թիվը, ստորագր.	Վերջն. եզրակաց. ամսաթիվը	ԱՐՄՆԱԲ-ի կողմից ընդունված որոշման		Արդիակա-նացված ոլորտի տրամ. ամս., ՀԳՄ-ի ներկայաց.-ի Ա.Ա, ստորագրությունը
					№, ամսաթիվը	բովանդակությունը	